ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա՛ է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ	5	Ֆր.
ԿԷՍ ՏԱՐՒԱՆ	3	„
ՄԻ ՀԱՄԱՐԸ	½	„

Ժողովո՛ւրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — անայ ազատութեան ճանապարհը:

Ժողովո՛ւրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՈՆԴՈՆ | Nr 8. ԴԵԿՏԵՄԲԵՐ. Nr 8. | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

Ն Ե Ր Կ Ա Ն.

ՍՈՒԼԹԱՆՆ ԻՐԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՈՒՐ Է ԵՓՈՒՄ ՄԵՐ
ԱՐԻՒՆԻՑ ՈՒ ՄՍԻՑ, ՄԻՆՉԴԵՌ ԵՒՐՈՊԱԿԱՆ „ԲԱՐԵԿԱՄ"
ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԱՆՈՒՇ ՔՆՈՎ ԵՆ ԱՆՑԱԾ ՄԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ...
ԻՍԿ ՀՐԱԲՈ՞ՒԽԸ... ՆԱ ՄԻՇՏ ԿՐԱԿՎՈՒՄ Է...

ՏԽՄԱՐ, ԱՐԻՒՆԱԽՈՒՄ ՁԱՐԱԳՈՐԾԸ.

Լուսնի եղջիւրի որդին իրան այլ ևս համարում է զերծ ամեն վտանգից. եւրոպական տէրութիւնները չը համարձակվեցան կտրել այն բարակ թելը, որի ծայրին նա կախված է իր աղու լուսնի եղջիւրից. իսկ Ռուսաստանը մի քանի կապեր արաւ այդ թելից, որ իր բռնապետ պաշտօնակցի կեանքն ապահովէ... հայ ժողովրդի մահուան գնով:

Մուհամմէդի յաջորդն անշուշտ իր մեծ մարգարէից ժառանգել է մի բան, որից նա մեծ առատութեամբ օգտվեց իր ճգնաժամին: Տեսնելով այն մեծ աղմուկը, որ եւրոպական խելօք դիպլոմատիան բարձրացրել էր պահականաւերի աւելացման խնդրի առիթով, միւսուլմանների խալիֆան սկսաւ պոռալ, ինչպէս կատուն, որի ագիի վրայ ոտք դնես: Բայց սակայն նա ինքը գիտէր, թէ ինչու էր պոռում. — նա այդ պոռոցով նաղ արաւ, որ տաղ չանի, որպէսզի այդպիսով ցոյց տված լինի Եւրոպային, թէ իբր իր սրտի մէջտեղն իսկ ըստանում է հարուած այդ պահականաւերի աւելացման պատճառով: Նա ստում էր, նա կեղծում էր. այդ խնդիրը մի խաղալիկ էր, և խորամանկ աղուէսի ճղաւոցն ուրիշ նպատակ չունէր, եթէ ոչ ցոյց տալ, թէ իբր այդ ամենամեծ վտանգն էր, որից ինքը խուսափում էր, և Եւրոպային այդ բանն աջողվելով, Թիւրքիայի հոգին իբր այլ ևս հանված պէտք է համարէր.... Թիւրքի կատակերգութիւնն աջողվեց: Իր դերը լաւ կատարեց և ապա իր հարէմում նա քթի տակ ծաղրեց Եւրոպային, որ այդպէս տխմար կերպով „խաբվում է“...

Եւ այսօր Մուհամմէդի յաջորդը, ներշնչված մի մարգարէական նախագուշակութեամբ, իր կեանքը երկարացնելու և իրան պարարտացնելու համար՝ արեան ապուրներ է ուտում: Իր կեանքի, իր սեփական կեանքի ապահովութիւնը սուլթան դնելի միակ և միակ հոգն է: Նա իր ծակ ու կաղ մարտանաւերն անգործութեան ու փտելու է դատապարտել հէնց այդ միակ հոգսի պատճառով: Նա միշտ երկիւղ է կրում, որ չը լինի մէկ օր իր զինուորական նաւաստիները, երբէք ամսաթոշակ չընդունելու պատճառով, յանկարծ գեղեցիկ Բոսֆորի ալիքների վրայից ռըմբակոծեն պալատը, պոռալով սուլթանի ականջի տակ՝ „հա՜ց... դրա՜մ“...

Այդ տխմար չարագործը, որն ունի մի համարձակութիւն, որ իր լրբութիւնն է և ունի մէկ անմիտ բեռ, որ իր սեփական կեանքն է, այսօր հանգիստ կերպով կարող է քնանալ իր երկու ականջների վրայ՝ Եւրոպայի նկատմամբ, և ուղարկել իր պէս թագակիր գլուխներին ադամանդազարդ արկղիկ, որ գինն է հայ ժողովրդի արեան ու կոլստի: Այդ փոքրիկ նուէրը Ռուսաստանի ինքնակալը զգացվելով կընդունէ... այն փոքրիկ ծառայութեան փոխարէն, որ նա արեց, նեցուկ լինելով մեր արիւնախում դաղանին՝ եփելու իր բռնապետական կաթսայում անուշ ապուր մեր արիւնից ու դիակներից:

Փա՜հ, „կառավարվելով“ այդպիսի տխմարի ձեռքով, այդ էլ մի պատիւ է մեզ համար — մեր մսից, ոսկորից ու արիւնից նրան ապուրի նիւթ մատակարարելը, ինչպէս մեծ պատիւ է ջահել հարսի համար կերված լինել առասպելի վիշապից: Սակայն ամեն առասպել իր հերոսն ունի, որպէս և ամեն վիշապ — իր սպանիչը: Այդ հերոսը, այդ սպանիչը կը լինի երիտասարդ քաջարի Օ.էմթունը, որ ամբողջ աշխարհում որոտում է այսօր իր փառաւոր ապստամբութեամբ: Այդ հերոսը, այդ սպանիչը վիշապի կը լինի յեղափոխական Հայաստանը, որ իր անակնկալներով կարող կը լինի դեռ խոր խթել իր չը կոտրվող դաշոյնն անկըշտում վիշապի կողը:

ԱՐԻԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ

(Շարունակութիւն) [1])

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

XI

Անձրևի մի քանի խոշոր կաթիլներ սկսան զարնվել գետնին: Փայլակն այնպիսի վառ մանիշակագոյն լոյս արձակեց, որ ասես ասբողջ քաղաքը սոսկալի հրդեհի մէջ լինէր. նրան յաջորդեց ահռելի որոտը և կայծակն ուժգին շառաչիւնով թնդացրեց երկիրը. կարծես կիրճի դէմ առ դէմ կանգնած ցից ժայռերն իրար ընդհարված և այդ աղմուկը բարձրացրած լինէին: Կամուրջի եղերքը կանգնած մեր մարդիկն իրանց մատները ականջները կոխած, սոսկումից ու վախից քարացած մնացել էին, երբ յանկարծ կամուրջի մէջտեղից լսեցին ինչ-որ աղմուկ և հայհոյանքի ձայներ՝ ուղղված կայծակի դէմ:

— Ակաւ, ասաց նրանցից մէկը:

— Բարով, խերով չը գար, ասաց միւսը, որը որոտից զգացած սոսկումից մատներն ականջից չէր հանել տակաւին:

— Նրա հետ կարեւոր գործ ունեցողը միշտ այնպէս է լինում, մէջ մտաւ երրորդը. անիծվածը շատ վատ ոտք ունի, կարծես այսպիսի խայրը օդերն իր գրպանումն է մտնում:

Մինչև այդ ժամանակ դիմացի կողմից եկողը մոտեցել էր նրանց և տեսնելով երեք անձերին, քիչ ինքն իրան ժողովեց և մինչև գետինը խոնարհելով թէմենահ արեց:

— Նրևի քէֆդ նոր է վերջացել, խուրշիդ, ասաց երեք մարդկանցից մէկը. չես մտածում, թէ ինչ վիճակում ենք գտնվում. քիչ էր մնացել երկնքի ձեղունը մեր գլխի վրայ փուլ գար:

— Հազար ներողութիւն, բիւր ներողութիւն, փաշա էֆէնդի, որ էֆէնդիներիս այնքան ներողութիւն պատճառեցի. դրա փոխարէնը խօսք կը տամ հէնց այս երեկոյ հատուցանել: Հազիւ խօսքը լրացրած՝ նա չը կարողանալով ինքն իր վրայ կենալ, ետ-ետ գնաց և կամուրջի փայտերին յենվեցաւ:

— Շո՛ւտ, գնանք, շո՛ւտ, սպասել չի լինիլ, կարկուտի հոտ է գալիս:

Փաշայի այս վերջին խօսքը կարծես մի տեսակ կենդանութիւն առաջ բերաւ գինովի վրայ. նա անկանոն քայլերով մօտեցաւ փաշային և նրա ականջից ցածր ձայնով ինչ-որ գաղտնի բաներ փսփսաց:

Փաշայի դէմքի վրայ փայլեցաւ մի վայրենի ժպիտ:

— Դա աքանչելի գիտէ. բայց եթէ կարկուտ չը գա՞յ, տարակուսեց նա:

— Դա ձեզ վստահացնում եմ, որ կը գայ, վալլահ իւլ ազիմ կը գայ, պնդեց միւս՝ երդվելով, միայն թէ քիչ աւելի շուտ գնանք, որ առաջին հարուածը մենք չընդունենք:

Նրանք արդէն մօտեցել էին Սել-Աղզի կոչված տեղին, երբ երեք ոստիկաններ դուրս գալով փայտեայ կամուրջի տակից, նշմարեցին նրանց և հանաչելով եկեւորներին, ճանապարհի վրայ բարևի կանգնեցան:

— Ապրիք, աֆէրիմ, ասաց փաշան նրանց բարևելով, ձեր պարտքը լաւ կատարեցէք. ձեզ տեսնեմ, կօմէտաչի ձեռքից չը փախցնէք:

— Է՛ա, ասաց ոստիկանապետ խուրշիդը, որ ամենքի ետևն էր մնացել, առէք այս մի մէջիդը և քիչ ձեր բերանը թրջեցէք: Ես գիտեմ, թէ ինչ բարի պտուղներ են այս անիրաւները, ասաց նա դառնալով իր պետին. մինչև որ սրանց գլուխն էլ այսօրուայ երկնքի նըման չամպոտի որս չեն բռնիլ: Ահա այդ գինետան մէջ, ցոյց տվեց նա ոստիկաններին, կուզէք դիւղ խմեցէք, կուզէք մաստիքա, քէֆը ձերն է, միայն թէ չափից դուրս չը խմէք, խաղի չը բռնվէք և իրար չը բզկտէք. այս օրերս այդ բանը „եասաղ“է, կօմէտաչի պէտք է բռնէք, նրանք վարպետորդի վարպետ են, ջիներին են խաբում, ուր մնաց գինովներին:

Ոստիկանները թուղթակաբար մի քանի շողոքորթող խօսքեր կրկնեցին, թէմենահ արեցին և ուրախ-ուրախ դէպի գինետունը ուղղվեցան:

Փաշան և իր հետևորդներն արտորալով կառավարական շէնքի առջև հասան և բոլորը մէկից փաշայի սենեակը մտան:

— Ահմէդ, ձայն տվեց ոստիկանապետը բանտի ոստիկաններից մէկին, կանչէր զէնջիրչիին, շուտով փաշա էֆէնդիի սենեակը թող գայ:

Զէնջիրչի Սայիդ-աղան կարճ հասակով, աւազակի խոր ընկած աչքերով և վայրենի նայուածքով մի տղամարդ էր. նրա յօնքի մազերը միչև աչքի կոպերն էին իջնում, իսկ պեսերի մազերը լերնեցը երբէք դուրս չէին գալիս: Նա մի ժամանակ Սասօնի ճանապարհի վրայ, Զարա-Դաղի անտառներում, աւազակութեամբ էր զբաղվում և իր շահատակութիւնների ընթացքում իբր քաջ, անվախ ու ճարպիկ անձնաւորութիւն մեծ անուն և համբաւ էր վաստակել. նրան անուանում էին գայփագ (սահուն), որովհետև միշտ խոյս էր տվել իրան հետևողների ձեռքից: Թիւրք, յոյն և հայ հասարակութիւնը վերջին ժամանակներում իրանց գանգատագրերով ձանձրացրել էին Թիւրք կառավարութեան: Այս վերջինս մի կերպ կարողացաւ համոզել իր լեռնային դաշնակցին և նրան զէնջիրչիի պաշտօնով քաղաք հրաւիրեց:

Սայիդ աղան շտապով ներս մտաւ. նրա կշտից քարշ ընկած բանալիների մի մեծ տըբցակ իր սուրին էր զարնվում և աղմուկ հանում:

— Շո՛ւտ, Սայիդ աղա, չը պէտք է ժամանակ կորցնել, ասաց նրան փաշան, մինչև անգամ չը թողնելով, որ նա իր թէմենահը լրացնէ. վաղը բանտ և ամելիքանցի գեավուրին և այստեղացի երեք գեավուրներին մերկացնելով „գօնուզ թօփի“ շինիր: Մենք այսօր մի լաւ խաղ պէտք է ունենանք: Շո՛ւտ, ժամանակ չը պէտք է կորցնել. եթէ առիթը ձեռքից փախցնենք, մէկ անգամ էլ ձեռք գցել անհնար կը լինի:

---

1) Տես „Ապտակի“ առաջին տարի Nrs 7—12 եւ երկրորդ տարի Nrs 1—7.



ԱՊՍՏԱՄԲ ԶԷՅԹՈՒՆՑԻՆ ԻՐ ԴՐՕՇԱԿԻՆ.

Կը սեղմեմ քեզ, բաղձիս ընկեր, իմ կրծքին,
Քեզ, որ ներկեր եմ արիւնով իմ վէրքին,
Կը համբուրեմ քո ծալքերը փառաւոր,
Ուր թափեր եմ այնքան արցունք սըգաւոր:
Ա՜հ, ծածանէ, քանի արիւն կը հոսէ,
Քանի իմ մէջ քաջութիւնը կը խօսէ:
Ընկե՛ր փառքիս՝ լի յոյսերով, եռանդով,
Ընկե՛ր՝ սիրուած անդաւաճան մի խանդով,
Հաստատէ՛ սուրբ Ազատութիւն,
Ուր կը կռուի արի Զէյթուն:

*

Կըռւէն կռիւ եւ փառքէն փառք — անդադար
Դու մընացած փոշիի տակ դարէ դար —
Այսօր որպէս զարթած արծիւ սաւառնես,
Մեր լեռներուն վըրան թըռիչ վեհ առնես,
Յաղթութիւններ քեզ հետ տանիս ամէն տեղ,
Հայ բանակի ո՛վ պահապան դու աստղ:
Մեր քաջերի արիւնովը շաղախուած,
Ազատ լերանց զոռ գագաթին դու մխուած՝
Հաստատէ սուրբ Ազատութիւն,
Ուր կը կռուի արի Զէյթուն:

*

Դո՛ւ, որ այսօր Հայաստանի ես յոյսը,
Հայ քաջերի առաջնորդը, խրախոյսը,
Դո՛ւ, որ ծաղկէ պըսակով ես զարդարուած,
Նշանաբանըդ՝ ազա՜տ կեանք եւ արդար հաց,
Կանաչ-կարմիր գոյներդ կապած ծիածան,
Քեզի պաշտպան կըտրճի կեանքն ու հրացան,—
Թանձըր ծուխի մէջ սըլացիր, ա՜հ, անյաղթ,
Փարոսի պէս լուսաւորէ հայ դըրախտ,
Հաստատէ սուրբ Ազատութիւն,
Ուր կը կռուի արի Զէյթուն:

*

Ծըփը հըպարտ թշնամիի յանդիման,
Դո՛ւ, որ կըրողն ես նըպատակի աննըման,
Բայց խոնարհէ մի կոյսի պէս սըգաւոր
Հայ կըտրճի դիակի վրայ փառաւոր:
Թո՛ղ ծակծակէ քեզ գնդակըն ամբարիշտ,
Բայց միայ կանգուն բոցի, մահւան մէջ ընդ միշտ
Եւ որ քեզմո՛վ կանգուն մընայ հայութիւն,
Անոր ճակատն պըսակէ քո օրհնութիւն,
Հաստատէ՛ սուրբ Ազատութիւն,
Ուր կը կռուի արի Զէյթուն:

*

Կը կըրեմ քեզ զոռ դաշտին մէջ սուրբ կռւի,
Ուր դիակը դիակի վրայ կը փռուի.
Ամո՛ւր ըլլայ քեզ կրող ձեռքը կըտրճի,
Մինչեւ որ նա իր սուրբ հողին վրայ հանգչի:
Բե՛ր մեզ օրէնք վերանորոգ մի կեանքի,
Ջարդէ՛ երկաթն ըստրկութեան կապանքի,
Եւ մոյգ վարդէ քո կարմիրը թովչական
Հայի բաղդի ըլլայ մի վարդ սքանչական,
Հաստատէ՛ սուրբ Ազատութիւն,
Ուր կը կռուի արի Զէյթուն:

*

Յառա՜ջ, ընկե՛ր, յառա՜ջ, անգի՛ն դու նըշան.
Թո՛ղ հնազանդի՛ն քեզ թիւրք սուլթանն ու փաշան:
Սէր, կեանք, պատիւ, արդարութիւն, նոր օրէնք
Քո փառքերդ են, ինչպէս եւ են քո սուրբ զէնք.
Քո յաղթութեան յաջորդ օրը երանի,
Թէ որ ընկած ըլլամ մահով դիւցազնի,
Ա՜հ, թո՛ղ դո՛ւ միշտ արշալոյսի գոյներով
Անմա՜հ փայլիս քո այդ վըսեմ փառքերով —
Օրհնէնք հայոց Ազատութեան,
Քաջ Զէյթունին, նոր հայութեան:

ԽԵՆԹԸ.

„ԱՊՏԱԿԻ“ ԼՈՒՐԵՐԸ.

Իբրև նշան երախտագիտութեան ռուսաց բռնապետութեան կողմից ստացած քաջալերութեան ու ձեռնտուութեան համար իր արած հայկական կոտորածների մէջ, հայերին գազան-կոտորող սուլթանը յատուկ գրութեամբ դիմել է ռուսաց կայսրին, առաջարկելով սրան ռուսահայերին էլ ուղարկել Թիւրքիա, որպէսզի սուլթանը նրանց էլ կոտորել տայ: Մեր երկու բռնապետների այդ սրտաշարժ գործակցութիւնը տեսնելով, եւրոպական միւս տէրութիւնները յոյս են տածում, որ հայկական խնդիրն այդպիսով լուծում կը ստանայ:

* * *

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ հայ ամենահարուստ անձերից մէկը յայտնել է և „խօսք տուել“, որ եթէ Զէյթունն իր ապստամբական դիրքում միայ դարձեալ... հինգ (ընդամէնը ?) ամիս, այն ժամանակ (դարձեալ մի պայման), եթէ հայկական բանակները „շարունակ յաղթող լինեն“ և (դարձեալ մի-պայման)... այդ հարուստ անձնաւորութեանը հռչակեն „Զէյթունի և Հայաստանի ազատարար„, — և այլն (միւս պայմանները չենք յիշում), այն ժամանակ... օ, այո, ա՛յն ժամանակ այն մեծ հարուստն իր կարողութեան կէսին կէսին... կէսը... կը տայ (չը կարծէք Զէյթունցիներին) մի հոյակապ եկեղեցու կառուցման նոյն իսկ Զէյթունում, յանուն և ի յիշատակ... կարծո՞ւմ էք գէթ նահատակների, ... ոչ, նոյն իրան... այն հարուստի:

Որքա՛ն ազգասէր, գթասիրտ, առատաձեռն, անձնամոռաց, անշահասէր... մի խօսքով, մեծ են, էլի... մեր հարուստները:

* * *

„Հնչակի“ երկու հակառակորդների խօսակցութիւնն իրար մէջ.

Զէնջիրչիի աչքերի խորքերում երևցան վայրենի ուրախութիւն, թէև նա փաշայի ասածներից ոչինչ չէր հասկանում, բայց գուշակում էր վերջապէս, որ մի „խաղ պէտք է խաղային“. իսկ ինքն այդ տարօրինակ խաղերից մեծ հաճոյք էր զգում: Նա անմիջապէս դուրս վազեց դէպի բանտը, բացեց նրա դուռը: Իր ձեռքումը բռնած մոմի աղօտ լոյսի տակ աչքի էր ընկնում մի սոսկալի տեսարան. հաստ շղթայի օղակները բօա օձի նման սկսան գալարվել, որոնց ծալքերում սեղմված տնքում, հառաչում էին ինչ-որ արարածներ և որոնց առաջին ակնարկով ճանաչել անկարելի էր անզօր լոյսի մէջ. դրանք բանտարկեալներ էին:

Շղթաները, առհասարակ, անցված էին նրանց ոտքերի կոճղներից և ապա մի շրջանակ կազմելով մէջքի վրայ, իրանց երկու օղակներում ամրապնդում էին բանտարկեալի բազուկները. յետոյ մի մեծ օղակի մէջ առնելով նրա վիզը կողպվում էին. կողպանքի տակ էին նաև ոտքերը և ձեռքերը. ոտքի շղթային մէկ ուրիշ շղթայով կապված էր մի բաւականին խոշոր երկաթեայ ռումբ կապարով լցված և որը, առնուազն, 30 օխա կը կշռէր. իւրաքանչիւր վզի օղակից մէկ ուրիշ շղթայ մի բանտարկեալին կապում էր միւսի վզին և այսպէս յաջորդաբար: Այդ դրութեան մէջ նրանցից որ մէկը կախված էր իր ձեռքերի օղակներից, որ մէկի ոտքը շղթայով վեր բարձրացրած և ստիպած էին նրան կանգնած մնալ ժամերով և երբեմն մինչև իսկ օրերով. ուրիշներին էլ՝ այնպիսի դիրք տված, որ նրանցից ոմանք ստիպված էին միշտ նստած մնալ: Այդ ամէնը կախված էր զէնջիրչիի քմահաճոյքից, նայած նրա վատ կամ լաւ տրամադրութեան: Իսկ ընդանում տիրում էր սոսկալի գարշահոտութիւն...

Զէնջիրչին ներս մտած ժամանակ բանտարկեալներից մէկը, որն իր մէկ ոտքի վրայ միշտ կանգնելու էր դատապարտված, ջուր խնդրեց:

—Ձե՛ռ խմիր, չը սատկեցար ա՛, ասաց զէնջիրչի Սայիդը փրփրած. ես եկել եմ արդէն ձեզ ջրել տանելու համար...

—Ա՛յ, Սայիդ աղա՛, հօրդ, մօրդ հոգուն, քիչ այս օղակները թուլցուր, կը խեղդվիմ, չես տեսներ, արիւնս ամբողջ գլուխս է խփեր, աչքերս կը դառնան, կը մեռնիմ...

—Հէնց այդպէս էլ պէտք է, ասաց Սայիդը բոլորովին պաղարիւն կերպով, պատժում ենք քո գլուխը, որովհետև անխելքութիւն է արել և շատ դրել: Բայց հա, իրաւ, քեզ էլ պէտք է տանել, և դառնալով պահապան ոստիկանին հրամայեց, որ նրա շղթաները բանայ, իսկ ինքը մօտենալով մէկ ուրիշին, ոտքով մէկ ուժեղ հարուած տվեց և՝

—Այ՛, աւանա՛կ, պոռաց, ի՛նչ ես հանգիստ պառկել. արի, գործ ունենք:

—Վալլահի, բիլլահի, ես լուր չունեմ, ասաց վերջինս, սարսափահար քնից արթնանալով և կարծելով, թէ սովորական „խոստովանութիւնն„ են սկսել. ես Սամսոնից եմ գալի, ոչինչ չը տեսայ, ես այդ մարդուն չեմ ճանաչել, ես...

—Սո՛ւս, սո՛ւս, լռի՛ր, անիծված, քեզ հարցաքննող չը կայ, ասաց նրան Սայիդը և մի քանի ապտակներ տվեց նրա քթին բերանին. շո՛ւտ ոտքի կա՛ց, պէտք է գնանք, փաշա էֆենդին սպասում է, ժամանակն անցնում է, վերջը լաւ խաղ չենք ունենալ:

—Դուն էլ արի՛ այս կողմ, խօզի զաւա՛կ, դու էլ մեզ պէտք ես, գոռաց նա մէկ ուրիշ երիտասարդի վրայ, նրա վզի օղակից ցնցելով, որի հետ ստիպվեցան առաջ գալ իր միւս ընկերները, որոնք շղթայով նրա վզի հետ կապված էին:

Սայիդն այսպէս չորս անձերի շղթաները բանալով միւսներից, բանտի կից պահապան ոստիկանների սենեակը տարաւ և նրանց հրամայեց բոլորովին մերկանալ:

Բանտարկեալները սարսափով և ապշած իրար երես նայեցան:

—Հա՛, շո՛ւտ եմ ասում, չէ՞ք լսում, անհաւատի զաւակներ, պէտք է լողալ գնանք, չէ՞ք տեսնում, օդը սաստիկ տաք է, որ մէկդ այրվում էք, որ մէկդ մրկվում, մէկդ ծարաւ էք և որ մէկդ շոգից հարբած և ձեր գլուխները կորցրած զառանցում էիք: Հէ՛, շո՛ւտ, շո՛ւտ, կրկնեց նա և պատից կախված մտրակը վերցնելով, իւրաքանչիւրին մի-մի հարուած տվեց:

—Հասա՛ն, Մուստաֆա՛, Սաբրի, էյ, ի՛նչ էք մնացել, գործ ունենք, փաշա էֆենդին սպասում է, կանչեց նա ոստիկաններին, որոնցից մի քանիսը թուղթ էին խաղում և իրար հայհոյում, իսկ միւսները պառկած խռփում էին խոր քնով:

—„Դօնուզ թօփի“ շինեցէք սրանց, „դօնուզ թօփի“, հասկացա՞ք, գո՛րծ ունենք, հրաշալի՛ գործ, որի նմանը ձեր կեանքումը չէք տեսել. այդպէս ասաց ինձ փաշա էֆենդին:

Բանտարկեալները "դօնուզ թօփի„ խօսքը լսելով, սարսափեցան, նրանց դէմքերը գունաթափվեցան և սկսան աղաչել:

—Շա՛ն զաւակների բերանը լաթ կոխեցէ՛ք, պոռաց Սայիդը, թող նրանց ձայնը չելնէ, մօրից մերկ պէտք է շինել...

Դուրսը որոտը շարունակում էր և կայծակը երբեմն այնքան ուժգին էր խփում, որ շէնքերը ցնցվում էին:

—Պատրա՛ստ են, հարցրեց մի պաշտօնեայ, գլուխը դռնից ներս խոթելով:

—Բէլի, էֆենդիմ, պատասխանեց Սայիդը, ցոյց տալով չորս անկերպարան, խոշոր, անկանոն գունտերի վրայ, որոնցից դուրս և խեղդված հառաչանքներ էին միայն լսվում...

Սրանք չորս բանտարկեալներն էին և արդէն "դօնուզ թօփի„ էին շինվել:

"Դօնուզ թօփի„ մի սոսկալի տանջանք է, որին ծանօթ են միայն նրանք, որոնք այս վերջին տարիներում եղել են թիւրքական բանտերում: Մարդու գլուխն առնում են իր երկու ազդրերի մէջ և սրունքները վրան ծալելով՝ այնպիսի մի ձևով կապկպում, որ մարմինն իր ամբողջութեամբ ներկայացնում է մի տձև գունտ և իր այդ դրութեան մէջ նրան գլորում են կոշտ քարայատակների վրայ, իսկ այդ տանջանքին ենթարկվողների վիզը խեղդվելու աստիճան սեղմված լինելով իրանց երկու ազդրերու միջև՝ հազիւ հազ կարողանում են

—Ըհ, այս անիծված Հնչակեաններն ինչպէս մեր ազգի տունը քանդեցին, ինչքան կոտորածներ պատճառեցին… Անիծված, նըզովված լինեն նրանք…

—Սպասիր քիչ էլ. թող նրանց Զէյթունն էլ յաղթվէ և երբ այդտեղ էլ կոտորվեն հայերն, այն ժամանակ այնպիսի թմբուկ չալենք Հնչակեանների գլխին, որ նրանք իրանք իրանց էլ չը ճանաչեն:

Բանը նրանումն է, որ, այո, Հնչակեանների „ազգասէր“ անուանված կոյր հակառակորդները այսօր գաղտնի յոյս են տածում Զէյթունի անկման մասին, որպէսզի յետոյ Հընչակեանների մորթը „ողջ-ողջ քերթեն“… իրանց այդ նախանձին և ստոր զգացման յագեցում տալու համար…

Կեցցեն մեր „ազգասէր“ հակառակորդները:

***

Ժամանակակից մեր յայտնի կրթված, ինտէլիգէնտ „հերոսներից“ մէկի խօսքը Կովկասում.—

„Օ՜, Զէյթուն, ծ Զէյթուն… Սպասիր, թող հայկական բանակները յաղթելով շարունակ, հաստատեն Զէյթունում կամ Կիլիկիայում, կամ Հայաստանում ինքնավարութիւն… ծ այն ժամանակ, դու տես, թէ ինչպէս թռչունի նման կերթամ այնտեղ… նրանց կառավարելու…“

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ.

Շներին վռնտելու համար մի կանչէք վագրներին:

Չինական միտք.

*

Մարդիկ թշնամի են այն բանին, ինչ որ իրանց գիտութիւնից դուրս է:

Աճլի.

*

Երբէք դժբաղդութիւն չիմանալը մի դըժբաղդութիւն է:

Պուբլիուս Սիրուս.

*

Հացն աղքատի կեանքն է. ով զրկում է նրան հացից՝ մարդասպան է:

X.

*

Սօցիալիզմն ամէնքին երջանկացնելու գիտութիւն է:

Պօլ Մէնկ.

*

Մենք դեռ մարդակերներ ենք. քիչերն ապրում և իրանց պարարտացնում են մեծամասնութեան արիւնով, կեանքով ու մսով:

Նոյն.

*

Վաղուան իրաւունքը շինված է նախընթաց օրւայ ապստամբութեամբ:

Էդ. Թէօդիէռ.

*

Վաղը հայրենիք կը լինի ամբողջ մարդկութիւնը:

Ա. Համօն.

*

Մի գործ հնարաւոր է դառնում, երբ նրա մասին միշտ մտածում են:

Տիրօն Վալուվէ.

*

Իշխանները ձանձրացնում են ամէնքին, վաստակում տխմարներին և ձեռնտուութիւն տալիս վատերին:

Սողոմոն.

*

Ըր կայ կառավարութիւն և ոչ կարգ այնտեղ, ուր բացառապէս թշուառութիւնն է սանձահարում մարդկանց և դրութիւնները:

Յ. Կապօդիստրիա.

*

Գաղափարի քարոզիչների բաժինն է եղել միշտ ծառայութիւն ու թշուառութիւն: Այդ ճակատագիրը չէ մեղմանում. որքան մարդ մօտենում է զուտ գաղափարին, այնքան օրհասը խստութեամբ է նրան հարուածում: Նրանք կորչում են հարիւրներով, հազարներով, նրանք, որոնք բիրտ ոյժի միջոցով են ջնջվում աշխարհի երեսից:

Աւ. Բլանկի.

*

Եթէ բռնակալները գիտեն միայն ճնշել և կոտորել, ճնշվածներն էլ գիտեն վառ պահել իրանց յոյսերը նոյն իսկ ամենածանր հարուածների տակ: Նըրանք, որոնք դարձան նահատակ — սուրբ են, իսկ որոնք դեռ ապրում են իբրեւ տանջված մարտիրոսներ՝ կը թագաւորեն իրանց կարգին: Եւ դրանց կռիւները, անձնազոհութիւնն ու մեծութիւնը վերջ ի վերջոյ կը յաղթանակեն արդարութեան դրօշակով, տարածելով իրանց շուրջ վերանորոգ կեանք, սէր ու երջանկութիւն: Եւ մարդկանց սրտերն, այլ եւս մաքուր ու վեհ, դարուց դար անխախտ ու սուրբ կը պահեն անմահ մարտիրոսների յիշատակը, որոնց արած զործը վեհանձն ու մեծ կը դարձնէ մարդկանց, եւ մինչեւ ամենահեռու ապագան, երբ կը դադարեն հոսել արտասուքն ու արիւնը, երբ ամեն բան կը թագաւորէ Սիրոյ խաղաղութեան մէջ — դարձեալ եւ դարձեալ անմահ հերոսների ու մարտիրոսների անունները կը լինեն մարդկանց աչքին մարդկային ցեղի վեհութեան, մեծութեան ու սրբութեան բարձր արժաններ:

Տ. Գրամմուզէն.

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.

ձայն հանել, եթէ լուռ լինի… Բոլորովին մերկ դրութեան մէջ "գօնուզ թօփի„ շինել, դա առաջին անգամն էր տեսնվում այդ օրը, և ինչպէս երևում էր՝ կատաղած ոստիկանապետի գիւտն էր, որի վրայ շատ էր հպարտանում: Ներս մտնողն ինքը ոստիկանապետն էր, որ մօտեցաւ Սայիդին և նրա թիկունքին մի քանի անգամ բարեմտաբար կամաց խփելով, իր գոհունակութիւնը յայտնեց:

—Աֆէրիմ, Սայիդ աղա. հաւատացնում եմ շատ լաւ էիր շինել, բաղշիշը վաղը կուղարկեմ. տես, մարդու երեսը պէտք է այսպէս ճերմակ հանել:

Դուրսը մի տարօրինակ աղմուկ բարձրացաւ. ամեն կողմից կարծես քարեր էին խփում բանտի պատերին:

—Վա՜յ Ալլահ էքպէր, երկինքը ծակվեցաւ, գետինը լքցվեցաւ, պոռացին պահապան ոստիկաններից մի քանիսը, հազիւ իրանք իրանց դռնից ներս գցելով.— սարսափելի կարկուտ է գալիս:

—Հաւատացնում եմ ձեզ քարի կարկուտ է, ամեն մէկը մէկ օխա կը լինի, ասաց մէկ ուրիշը չափազանցելով:

—Խաղը սկսենք, ասաց ոստիկանապետը, գըլտորեցէք սրանց դէպի դուրս, ցոյց տվեց նա կապվածներին. ծն, արշ, պոռաց նա:

Չորս ոստիկաններ գլտորելով դռնից դուրս հանեցին բանտարկեալներին:

—Ձեր հաստ կապօտները հագէք, գլխանոցները դրէք և նրանց գլտորեցէք բակում, հրամայեց ոստիկանապետը մի քանի ոստիկաններին, իսկ ինքը շտապով վազեց փաշայի և միւսների մօտ, որոնց իւրաքանչիւրը մի-մի լամպ ձեռքին, ծածկված պատշգամբի վրայ կանգնած՝ հանդիսատես էին լինում այդ տարօրինակ տեսարանին:

Կարկուտի տեղատարափը սոսկալի կերպով հարուածում էր մերկամարմին զոհերին և նրա խոշոր հատիկները գնդակի նման խփում և կապուտացնում էին մարմինները: Զոհերը ցնցվում էին անկարող լինելով ձայն հանել, և կարկուտի անընդհատ հարուածից նրանց մըկանունքները թուլացան, թմրեցան և սկսան դողդողալ… զոհերը միշտ գլորվում էին…

—Խեղդվեցա՜յ, վերջապէս լսելի եղաւ մի ձայն…

—Ազատեցէք ինձ, աղաչում եմ, ազատեցէ՜ք..

—Ընէծք ձեր գլխին, վայրենի գազաններ… աւելի լաւ է մէկ հարուածով սպանվելը, մըրմռում էր մէկ ուրիշն իր արիւնաթաթախ շըրթունքներով:

Ոչ ոք չէր լսում. նրանց հառաչներին պատասխանում էին վայրենի ծիծաղով և նրանց ձայնը մարում էր կարկուտի շառաչի տակ… Նրանց միշտ գլտորում էին կարկուտի հատիկների վրայ, որոնց կոտրած սուր սառուցի ծայրերը ծակոտում էին նրանց մարմինը: Արիւնը ներկում էր սալայատակը…

Հառաչներն այլ ևս դադարել էին….

Ընչնչացա՜ն արդեօք թշուառները….

XII

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ,

Եէշիլ-Ըրմագը երկուսի է բաժանում Ա… քաղաքը: Արևելեան մասը գետեզերից սկսած աստիճանաբար բարձրանում է. նա հասնում է մի որոշ բարձրութեան, ուր բնական արգելքներ կտրում են նրա առաջը: Կոշտ ու կոպիտ ապառաժների մի երկար շարք հիւսիսից ըսկսած ձգվում է դէպի հարաւ և գետի ուղղութեամբ թեքվելով հարաւ-արևելք, կազմում է մէկ անկանոն կիսաշրջանակ. հասնելով մի յայտնի կէտի միախառնվում է գետի հետ և կտրում ճանապարհորդների անցքը: Արևմտեան մասը, սկսելով գրեթէ կառավարական շէնքից, տարածվում է դէպի հարաւ: Նա ներկայացնում է մէկ աղեղնաձև տափարակ, որի հիւսիսային անկիւնում շինված է քաղաքային ժամացոյցի աշտարակը, իսկ հարաւային անկիւնում՝ հին քաղաքի հսկայ երկաթեայ դուռն իր ահագին կամարով: Սարաբօնի հին փայլուն հայրենիքն այժմ բոլորովին կորցրել է իր նախկին փառքը: Մօնգօլի ժառանգորդներն աւերել են ամեն ինչ: Քաղաքի այդ մասում ամեն կողմ տիրում է կեղտոտութիւն. փտած փայտի կտորներ, առատ մոխիր, տնային կարասիների կտորտանք, դիակներից մնացած բորբոսնած ոսկորների մեծ քանակութիւն, միանալով անասունների աղբին և մարդիկների կղկղանքին, արձակում են անտանելի գարշահոտութիւն, որով լքցվում է ամբողջ մթնոլորտը: Արևի այրող ճառագայթները նրանց փայտաշէն բնակարաններին տվել են բաց սև գոյն. կոտրտված կղմինտրներ գետի խոնաւ օդից իրանց վրայ ստանալով մամուռի մեծ քանակութիւն, անկանոն կերպով ծածկում են այլանդակ տնակների եռանկիւնի մակերեսը. պատերի վրայ երևում են փոքրիկ պատուհաններ, որոնց ապակիները ծածկված են խաչաձև կպցրած թուղթի նեղ շերտերով և յօրինում են նարդի խաղի աչքեր. ցածր առաստաղի տակ, խեղդող օդի ազդեցութեան մէջ բանտարկված բնակվում են „էքսիք էթէկները.“*) Այդ խաւար սենեակներում խաւարի զաւակները շատ են կատարում խաւարային գործեր…

(Կը շարունակվի) Վ.Ի.Թ.

*) Պակասաւոր արարած. փոխաբերական խօսք, որ զործ են ածում թիւրքերը. նշանակում է կին: